

Հ. Ս. Խ. Հ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Սոցիալական Ապահովագրության Վարչություն

# ՀԱՂՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1923 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ




368.4  
2-11 V

ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՈՑ. ԱՊ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1924



370  
2064-ՆԱ

368.4  
Հ-11  
ՎԵ



Հ. Ս. Խ. Հ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ  
Սոցիալական Ապահովագրության Վարչություն

# ՀԱՋՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
1923 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

15324



09 SEP 2013

44.095

355  

---

11.1112

# ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՐՉԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանում սոցիալական ապահովագրութեան մարմիններն ստեղծելու և ամրապնդելու մեկ և կես տարվա աշխատանքից հետո անհրաժեշտութեան հանդիսացավ հետադարձ հայացք ձգելու մեր անցյալ, 1923 թ. գործունեությունների վրա և հրատարակելու ներկա հաշվետվությունը:

Ներկա հրատարակությունը նպատակը սոցիալական ապահովագրության գաղափարների տարածումն և բանվորական մասսաներում, ինչպես և մեր անցյալ գործունեությունների և ներկա գրությունների համառոտ լուսաբանությունը: Յեվ այդ նպատակն իրագործողները պետք է լինեն ապահովագրական և արհեստակցական գործիչները:

Սոցիալական ապահովագրության սկիզբը Հայաստանում համարվում է 1922 թ. հոկտեմբեր ամիսը, բայց փաստորեն առաջին ապահովագրական գանձարկը, Յերևանինը, սկսել և գործել 1923 թ. հունվարին:

Ապահովագրության գործը վարող առաջին ապարապ հանդիսացել է «Ապահովագրական խորհուրդը», վորը կազմակերպված էր միջվարչական հիմունքներով: Խորհրդի գործունեությունն առաջին օրերին իսկ պարզվեց, վոր այդ մարմինն իր կառուցվածքով ի վիճակի չէ լինելու իրագործելու իր առաջադրած նպատակները: Յեվ յեռամեյա գործունեություններից հետո Խորհուրդը լուծվեց և նրա ֆունկցիաներն անցան Աշխատանքի կոմիտեի անդամներին, վորին առընթեր հիմնվեց Սոցիալական Ապահովագրության քրաթինը: Հետագայում, յերբ Սոց. Ապ. քրաթինն ամրապնդվեց և ֆունկցիաներն ընդլայնվեցին, քրաթինը վերակազմվեց և դարձավ Սոցիալական Ապահովագրության Վարչություն:

Վարչության առաջ զրված էյին կազմակերպչական լայն խնդիրներ, վորոնք յերբեմն անլուծելի էյին թվում տիրող պայմաններում: Ապահովագրության գործը հիմք էր դրվում մի յերկրում, ուր չկային ապահովագրական գործիչներ և համապատասխան գրականություն, ուր բանվորական գանգվածներին միանգամայն անձանոթ էյին սոցիալական ապահովագրության գաղափարները:

Անհրաժեշտ է մատնանշել այն, վոր յերբ Ռուսաստանում Սոցիալական Ապահովագրության գործը գանվում էր Սոց. Ապահովագրության մարմինների ձեռքին, այստեղ, ծայրագագառում, զգացվում էր, վոր ավելի նպատակահարմար և ուղիղ կլինի ապահովագրության գործը կենտրոնացնել Աշխատանքի մարմիններում: Յեվ այդտեղ հենց սկզբից ընդգրկված այդ ճիշտ տեսակետով պետք է բացատրել ապահովագրական գործի արագ զարգացումն ու ամրապնդումը: Առաջին կիսամյակում հիմնվեց յոթ ապահովագրական գանձարկ, իսկ յերկրորդ կիսամյակում ևս յերեք բաշխիչ կայաններ: Հետագայի խոսքերով ապահովագրական

մարմինների ցանցը, Սոց. Ապ. Վարչությունը միաժամանակ հույս էր տանում սոցիալական ապահովագրության գաղափարների ժողովրդականացման մասին, այդ նպատակով ուղարկելով իր հրահանգիչներին գավառները, ուր գանձարկների նախապահներին հրահանգվում էր պարբերական հանրամատչելի գեկուցումներ կարդալ բանվորական մասաներին: Նույն նպատակով հրատարակվեց չորս ապահովագրական գրքույկ և տան և հինգ պլակատ, վորոնք լայնորեն տարածվեցին բոլոր գավառներում:

Մեր գործունեությունն առաջին շրջանում, թե կազմակերպչական և թե կուլտուր—կրթական աշխատանքներում արհեստակցական մարմինների գաղափարական դեկավորությունն անզգալի յեր, սակայն հաշվետու տարվա վերջում ապահովագրական և արհեստակցական մարմինների սերտ և որգանական կապը դառնում է փաստ: Այդ հանգամանքը հաստատուն յերաշխիքներ և ընձեռում Սոց. Ապ. Վարչությանը «հետագայում» 1924 թ. իր առաջադրած նպատակները լիովին իրագործելու:

Հաշվետու տարվա ընթացքում ապահովագրական մարմինների թույլ կողմերից մեկը յեղել և ապահովագրական մուծանքների թույլ և անհաջող գանձումը: Տարվա սկզբին հիմնարկությունների և ձեռնարկությունների պարտքը հանում էր 40—45%—ի և միայն տարվա վերջին այդ տոկոսը հասավ 20%: Հաջորդ տարվա լոգունդներից մեկն էլ պետք է լինի «100%»-յա գանձում և կորչի ամեն տեսակի մեղմությունն ու մարդասիրությունն ապահովագրական մուծանքների գանձման գործում:

Յերկրորդ թույլ կողմը բժշկական ոգնությունն և յեղել: Տարվա սկզբին քիչ թե շատ կարգավորված բժշկական ոգնությունը տարվա չիքսին սկսում է կազալ: Յեվ դրա պատճառն այն էր, վոր բուժական հիմնարկներն այդ ժամանակ պետական մատակարարումից անցնում են տեղական միջոցների: Տեղական մարմինները, լինելով անպատրաստ այդ գործի համար, չկարողացան իսկույն և յեթ կարգավորել այդ հարցը, և այդպիսով ապահովագրվածների բժշկական ոգնության գործում առաջ յեկած բեկումը շարունակվեց մինչև տարվա վերջը: 1924 թ. Սոց. Ապ. Վարչությունը ծրագրում է հիմնովին փոխել ապահովագրական ոգնության հիմնական տեսակի—բժշկական ոգնության սիտեմը և դնել այն ամուր հիմքի վրա:

Նոր սիտեմը կայանալու ենքանում, վոր Սոց. Ապ. Վարչությունը սլայմանապիր է կնքելու առողջապահական մարմինների հետ, և այդ պայմանադրերի համաձայն առողջապ. մարմինները պետք է բժշկական ոգնություն հասցնեն ապահովագրվածներին ընդունված ծրագրով, նորմայով և նախահաշվով, ըստ վորում ապահովագր. մարմինները կհատուցանեն բժշկական

ոգնութեան համար կատարված ծախքերի մի մասը (նկատելի առնելով պետական և տեղական բյուջեները):  
 Վերոհիշյալ յերեք հիմնական խնդիրներից զատ, հաջորդ տարում ծրագրվում է բարելավել նաև սանատորիա-կուրորտային բժշկութեան գործը և հանգստյան տները: Այդ հարցը պետք է կարգավորվի այն իմաստով, վոր Առօրյակամառը պետք է փոխադարձ համաձայնութեամբ վորոշ թվով տեղեր հասկացնի հանրապետութեան սահմաններում գտնվող սանատորիաներում ապահովագրվածների կարիքների համար: Անհրաժեշտ թվով տեղեր պետք է ստանալ նաև հանրապետութեան սահմաններից դուրս գտնվող բուժավայրերում:

Հանգստյան տների կազմակերպման առաջին տարվա փորձը ցույց տվեց, վոր անհրաժեշտ է հիմնովին փոխել այդ գործի կազմակերպման հիմունքները: Հանգստյան տները պետք է, իրոք, հանդիսանան ապահովագրվածների համար հանգստյան վայր, և այդտեղ վոր մի գեպքում չլինի հիմունքներ: Հանգստի պետք է ուղարկվեն հոգնած բանվորները: Հանգստյան տների կազմակերպումն ըստ ամենայնի պետք է դոնացում տա տեխնիկայի և առողջապահութեան պահանջներին: Կազմվեն հետ միաժամանակ պետք է ամուր հիմքերի վրա դրվե ֆիզկուլտուրայի գործը:

Մեր առաջադրած մերձավոր խնդիրներն ու ծրագիրը պետք է դառնան բոլոր ապահովագրական կարմիրների սեփականություն և անշեղ իրագործվեն կյանքում:

**ՍԱՆԱՏՈՐԻԱ ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՈՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐ**

Ապահովագրվածների բժշկական ոգնութեան գործը կարգավորելու և բնդրային նպատակով հաշվետու տարվա նեց սկզբին Սոց. Ազգ. Վարչութեան կողմից միջոցներ ձեռք առնվեցին հանրապետութեան մեջ գտնվող միակ Իրիջանի սանատորիայում տեղեր հատկացնելու նաև ապահովագրվածներին: Բնականաբար միայն Իրիջանի սանատորիան ի վիճակի չէր բավարարելու այն կարիքին, վորը զպացվում էր Հայաստանում: Վարչութեանը հարկադրված էր խիստ բնորոշ լուծում կատարելու սանատորական բուժման կարող ապահովագրվածների մեջ և տեղեր եր հասկացնում գլխավորապես թոքախտավոր բանվորներին: Սանատորիա ուղարկվող բանվորների ճանապարհածախսը հոգացել է Սոց. Ազգ. Վարչութեանը:

Հաշվետու տարում միջոցների սղութեան պատճառով վարչութեանը հնարավորութեան չունեցավ տեղեր ձեռք բերելու Հայաստանի սահմաններից դուրս գտնվող կուրորտներում և հատկապես Հյուսիսային Կովկասի հանգստի ջրերում, չնայած, վոր զրա կարևոր մեծ էր և հաճախ անհետաձգելի:

Հաջորդ տարվա համար Սոց. Ազգ. Վարչութեանը միջոցներ է ձեռք առել Կովկասյան և Արիժի կուրորտներում տեղեր ստանալու Հայաստանի ապահովագրվածների համար:

Սանատորիական բժշկութեանը գուզրնից Վարչութեանը հենց սկզբից մտահոգ յեղավ հանգստյան տների բանալու հոգնած ու հանգստի կարիք ունեցող ապահովագրվածների համար: Չնայած այն հանգամանքին, վոր այդ գործը կապված էր մեծ ծախքերի հետ և վարչութեան սահմանափակ միջոցներից միանգամայն վեր էր, այնուամենայնիվ հաջողվեց հաշվետու տարվա հուլիս ամսին Ծաղկաձորում բանալ մի հանգստյան տուն 30 մահճակալով: Այդտեղ Սոց. Ազգ. Վարչութեանն ոգնութեան յեկավ Ա. Մ. Հ. Կ. Խ. Կովկասյան Բյուրոն, արամագրելով Սոց. Ազգ. Վարչութեանը հանգստյան տան կազմակերպման համար անհրաժեշտ գումարի կեր: Բանվորներն ու ծառայող

ները հանգստյան տուն են ուղարկվել բացառապես արհեստակցական միութեանների միջոցով:

1923 թ. ամառային սեզոնում Ծաղկաձորի հանգստյան տուն և ուղարկվել բնդամներ 37 բանվոր և 12 ծառայող:

Հանգստացողների մթերաբաժինը կազմել է 496 կալորիա այն ժամանակ, յերբ այդպիսին Իրիջանի սանատորիայում յեղել է 4500 կալորիա:

Հանգստյան տանը սովորական զվարճութեաններից բացի վարչութեանը հանգստացողների համար կազմակերպել է նաև ոգտակար զվարճութեաններ, ինչպես ընթերցանութեան, յերաժշտութեան, ճանապարհորդութեաններ ղեպի մտտակա պատմական վայրերը և այլն: Առաջիկա սեզոնին վարչութեանը ծրագրում է հանգստյան տանը կազմակերպել նաև ֆիզկուլտուրային աշխատանքներ, վորն առողջապահական մեծ շահովետութեան է ներկայացնելու հանգստացող բանվորների համար: Ֆիզկուլտուրային աշխատանքները տարվելու յեն այն ուղղութեամբ, վոր հանգստացողներն իրենց արհեստի հետ կապված մարմնական շարժումներին հակառակ մարզանքներ կատարեն:

Նկատի ունենալով Սոց. Ազգ. Վարչութեան ֆինանսական դրութեան համեմատական բարելավումը, 1924 թ. սեզոնին ծրագրվում է Ծաղկաձորի հանգստյան տան մահճակալների թիվը ավելացնել տունվազն 30 օրով:

**ԿՈՒՎՏՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆ**

Սոց. Ազգ. Վարչութեան կուլտուր-կրթական գործունեյութեանն ընթացել է յերկու հիմնական ուղղութեամբ: Հրատարակչական և հանրամատչելի դատախոսութեանների կազմակերպումը: Հաշվետու տարում Վարչութեանը կազմակերպել է 19 միութենական ժողովներ, ուր ղեկուցումներ են կարգացվել սոցիալական ապահովագրութեան մասին: Հրատարակված է չորս ապահովագրական գրքույկ և 15 պրակատ: Հայերեն լեզվով հրատարակված են հետևյալ գրքույկները. Բ. Գանակի՝ «Սորչրդային Սոցիալական ապահովագրութեանը», Վինսկուրով «Բանվորական ապահովագրական շարժումը», Ջ. Տիտերուն՝ «Բանվորների ապահովագրութեանը, վորպես գասակարգային պայքարի արդյունք», և Բ. Գանակի՝ «Ուժընտրել ապահովագրական գանձարկի անպատ»: Աշխատանքի կոմիտարիատի պաշտոնական որգան «Աշխատանքի տեղեկատու» թերթում Սոց. Ազգ. Վարչութեանն ունեցել է իր հատուկ բաժինը, ուր հրատարակվել են սոցիալական ապահովագրութեան վերաբերյալ ղեկիտներ, հրահանգներ և շրջաբերական կարգադրութեաններ: Ներկայումս, շնորհիվ ապահովագրմարմինների ֆինանսական միջոցների ուժեղացման, ինչպես և արհմիութեանների հետ ստեղծված սերտ կապի, Սոց. Ազգ. Վարչութեանը հնարավորութեան ունի ավելի լայն հիմքերի վրա ղեկելու իր կուլտուր-կրթական գործը և հանրամատչելի գրականութեան հրատարակութեամբ տարածելու սոցիալական ապահովագրութեան գաղափարները հայ բանվորական շրջաններում:

# ՊՐՈՑԵՍԻՆԻՔՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալական ապահովագրութիւնը պրոլետարական հեղափոխութեան գաստակարգային ամենախոշոր նվաճումներից մեկն է։ Պրոլետարիատը Ռուսաստանում շատ յերկար տարիներ համառ պայքար է մղել և այժմ ել շարունակում է մղել՝ ամբողջ յերկրագնդի վրա սոցիալական ապահովագրութեան համար, ապահովագրելու իրեն հիվանդութեան, գանազան, զժրախտ գեպքերի և գործազրկութեան գեպքում։

Սոցիալական ապահովագրութեան այս մեկ ու կես տարվա փորձը մեր աշխատավորութեանը ակներախ կերպով ցույց տվեց, թէ վորպիսի խոշոր առավելութիւններ ունի նա մեր աշխատավորութեան գաստակարգային գիրքերը նոր անտեսական քաղաքականութեան պայմաններում ապահովելու տեսակետից։ Իայց միաժամանակ այս փորձը յերկան բերեց այն բացերը, վոր մենք ունենք այդ ասպարիզում։

Ամենից ասաջ սոցիալական ապահովագրութեան գազափարնները մեղ մտ գեռ չեն արմատացել մասսաների մեջ, այդ աշխատանքները դեռ մասսայական բնույթ չունեն։ Այն ինչ մենք գիտենք, վոր յուրաքանչյուր սոցիալական նվաճում այնքան ամուր է և գրախան տվյալ գաստակարգի համար, վորքան նա ուժեղ հիմքեր ունի մասսաների մեջ և վորքան մասսան իր ամբողջութեամբ յժված է այդ աշխատանքներին։ Սոցիալական ապահովագրութեան ասպարիզում քաղմաթիվ թիրութիւններ, բաղմաթիվ բացեր հնարավոր չի լինի նկատել և վերացնել, յեթի մասսան ինքը չի լծվի այդ աշխատանքներին։

Այդ տեսակետից մեր պրոֆմիութիւնները վորպես մասսայական որդաններ մինչև այժմ շատ քիչ բան են արել այդ ասպարիզում։ Հտարակական գաստ կադակերպել այս կամ այն շարամիտ ապահովագրվածի վրա, վոր շահագործում է ապահովագրական գրամարկը կեղծ միջոցներով, հասարակական պատասխանատւութեան յենթարկել այս կամ այն բժշկին, վոր, չգիտակցելով յուր պատասխանատու և բարձր հեղափոխական միախան, կխուսափի բժշկական բարեխիղճ աջակցութեանից, կարգի հրովերել այն անտեսական որդանին, վոր ժամանակին չի մուծի ապահովագրական տոկոսները և այլն։ Ահա այն խոշոր պատասխանատու աշխատանքը, վոր ընկնում է մեր միութիւնների վրա սոցիալական ապահովագրութեան հանգեպ։

Մեր պրոֆմիութիւնները պետք է գիտակցեն,

վոր սոցիալական ապահովագրութեանը պրոֆեսիոնալ շարժման որդանական մասն է կազմում, այն միջոցներից մեկը, վոր հնարավորութեան է տալիս կապել լայն մասսաներին միութեան հետ։ Սոցիալական ապահովագրութեան գիմող պրոֆմիութեան անգամը, գամի որյեկտ է, վոր շատ զգայուն է ինչպես գեպի գրական նույնպես և բացասական վերաբերմունքը։ Սոցիալական ապահովագրութեան ոժանդակութեանը գիմող միութեան անգամի ամբողջ համակրութեանը կարելի է շահել, կապել նրան պրոլետարիատի գաստակարգային որդանների հետ մի գիտակից, աշխուրջ վերաբերմունքով։ Միաժամանակ կարելի յէ ամենաչնչին, յերբեմն աննկատելի փոքրիկ սխալով, նրա ամբողջ էյութեանը լարել բոլոր գոյութեան ունեցող կադակերպութեանների գեմ։ Այդ տեսակետից սոցիալական ապահովագրութեան տեղական որդանները պետք է լինեն մասսաների կարիքներին զգաստ, նրանց հողերանութեանը մտտիկ կանգնած որդաններ։

Յերբեմն մի ճնչին փաստաթիղթի համար կարելի յէ միութեան անգամին շրջել տալ հիմնարկները, այն ինչ հնարավոր է լինում առանց այդ փաստաթղթի վերջացնել ամբողջ ձեականութեանը։ Այդ տեսակետից շատ մեծ նշանակութեան ունի սոցիալական ապահովագրութեան որդանների ձեակնութեանը նրանց մեջ աշխատող ընկերների ընդունակութեանները։

Մեր միութիւններն են, վոր որդանապես շահագրգռված են այդ աշխատանքների մեջ, և նրանք են, վոր կազմակերպում են այդ որդանները, տալով այնտեղ իրենց ներկայացուցիչներին։ Մինչև հիմա այդ հանգամանքի վրա մեր միութիւնները շատ քիչ ուշադրութեան են գարձրել, նայելով նրանց վրա ի միջի այլոց։ Պետք է ոգտագործել սոցիալական ապահովագրութեան վարիչների վերընարութեանները, ուղարկելով այնտեղ լավագույն պրոֆաշխատողներին՝ մասսայական հողերանութեամբ։ Պետք է անմիջական միջամտութեամբ պարզացնել սոց. ապահովագրութեան գրատեսչակները՝ ամենանվագագույն շափերի հաւցնելով գրատեսչակային, ձեականութեանները։

Այժմ, յերբ մեր միութիւնների հերթական խնդիրն է աշխատանքի կենտրոնը տեղափոխել մասսաների մեջ, յերբ նրանք որդանապես շահագրգռված են միութեան անգամներին անմիջականորեն միութեան հետ կապելու մեջ, պետք է նրանց աշխատանքի կենտրոնը, ուշադրութեան ֆոկոսը, բացի աշխատանքի բորոպից, լինեն նաև մեծավ շափով սոցիալական ապահովագրութեան որդանները։

Հարութիկ

# ՀԱՇՎԱՊԱՅԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ, 1923 Թ.

№. Բաժ. Կարգի	ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Ա Մ Ի Ս Ն Ե Ր											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Սեպտեմբեր	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Յերևանի գանձարկղ	4.050	4.236	4.196	4.387	4.146	4.090	3.658	4.166	4.147	4.089	4.091	4.163
2	Լենինականի գանձ.	—	—	1.186	1.186	3.507	3.507	2.682	3.503	3.328	3.328	3.373	3.373
3	Եջմիածնի գանձ.	—	—	566	616	621	632	637	632	654	632	662	645
4	Գիլիջանի գանձ.	—	380	408	534	553	570	570	555	612	612	611	613
5	Փամբ.-Լոռու գանձ.	410	410	331	1.531	1.548	1.569	1.533	1.543	1.551	380	1.373	1.373
6	Ն. Բալայեղի գանձ.	—	—	—	401	401	401	638	641	642	631	549	541
Ընդամենը		4.460	5.026	6.687	8.655	10.776	10.769	9718	11.040	10.934	9.672	10.659	10.708













«Գ» ՓՈՆԴԻՅ ՏՐՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐԸ (հազարներով)\*

№ ըստ կարգի	ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հուն.	Հուլ.	Ոգոս	Սեպ.	Հոկ	Նոյեմ.	Դեկ.	Ընդ. 1933թ.
		Տրված և Աստուղ-կամ.												
1	Յերևանի գանձարկղ		186988	8000	224500	1151086	1796380	1909820	1367073	1890096	5472996	6955960	2526900	23489779
2	Լենինականի գանձ.							46365	23500	36670	9260321	30000	26767852	36164708
3	Նջմիսի գանձարկղ				640			438000	54000	116670	76000	3965000	556505	5206818
4	Դիլիջանի գանձարկղ				9730	207247		15470		45000			9928830	10206277
5	Փամբակ-Լոռու գանձ.				43700		100000	405585	195500	1135267		6252065	75600	8207687
6	Ն.-Բայազետի գանձ.					19218						2097276	2516250	4632744
	Ընդամենը	186988	8000	278570	1377531	1896380	2815240	1640073	3223703	1480317	19300271	42371940	87908913	

\*) Այս ֆոնդը նշանակված է բժշկական ոգնություն համար, վորը արված էր Առժողովին: Այդ գումարը ծառայում էր տպահովագրվածների բժշկական ոգնություն բարելավման համար:

Այս ֆոնդով մեծ մնացորդ է մնացել այն պատճառով, վոր հուլիս ամսից մի քանի բժշկական հիմնարկներ արված են յեղել տեղական մարմիններին, հետևապես այս ֆոնդի բաժանումը պետք է կատարվեր Առժողովատաի և Գավառների միջև: Գավառների միջև բաժանելու խնդիրը քննվել է Հայաստանի Ժողովուրդում ղեկավարներ ամսին, իսկ բաժանումը սկսվել է 1924 թ. հունվարին, այդ պատճառով էլ այդ գումարը մնում է հաշվետվության մեջ:

Ձև № ըստ կարգի	Գանձարկղների անունները	Ա Մ Ի Ս Ն Ե Ր												
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Սեպտեմբեր	Օկտոբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը	
1	Յերևանի գանձարկղ	—	18	331	1548	1395	2057	2322	2727	2452	2075	2003	2095	19023
2	Լենինականի գանձ.				102	486	539	813	445	1172	894	1388	1315	7154
3	Եջմիածնի գանձ.							91	140	258	88	151	234	962
4	Դիլիջանի գանձ.				17	27	82	137	57	185	336	201	790	1832
5	Փամբակ-Լոռու գանձ.			25	75	205	300	358	332	397	113	30	31	1866
6	Ն.-Բայազետի գանձ.					25	60		98	116	199	60	52	850
	Ընդամենը	18	356	1742	2378	3038	3721	3790	4580	3705	3833	4517	31687	

1923 թ. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ (Ֆ. զր. հազարներով) \*

Ձև № ըստ կարգի	Գանձարկղների անունները	Ա Մ Ի Ս Ն Ե Ր											
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Սեպտեմբեր	Օկտոբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ամբողջ տարում
1	Յերևանի գանձարկղ	149500	161655	292650	671520	1220915	945535	1708560	6335483	6651894	13413370	30615350	62226432
2	Լենինականի գանձ.		89790	242680	404985	556208	512249	712420	1268175	1116350	4838475	22312258	32053570
3	Եջմիածնի գանձ.	2333	1263	103835	124755	305595	350670	455599	1380138	1028563	1471450	5763950	10988151
4	Դիլիջանի գանձ.	64014	36444	73360	113021	177492	537145	306975	1708034	1968845	2001617	22487439	29474386
5	Փամբակ-Լոռու գանձ.	687	8550	69521	274077	452406	347224	863205	934615	2406657	586660	7055151	26887003
6	Ն.-Բայազետի գանձ.			3900	255452	199950	55525	277100	1654002	812853	2041915	5860600	1169297
	Ընդամենը	687	224397	358673	990482	2032139	2807384	3262229	4335269	14812489	12165165	30921978	172798839

\* ) Մանր. տես լերես 16

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎ

ՔՆ Պատ կառուցի	ԳԱՆՁԱՐԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ՀՈՒՆՎԱՐ			ՓԵՏՐՎԱՐ			Մ Ա Ր Տ			ԱՄՐԻԼ			ՄԱՅԻՍ				
		Վերանց թվում ըստ կատեգ.			Վերանց թվում ըստ կատեգ.			Վերանց թվում ըստ կատեգ.			Վերանց թվում ըստ կատեգ.			Վերանց թվում ըստ կատեգ.				
		1-ին	2-ին	3-ին	Մեղրանից Վերանց Պահպանողի Կատեգորիա	1-ին	2-ին	3-ին	Մեղրանից Վերանց Պահպանողի Կատեգորիա	1-ին	2-ին	3-ին	Մեղրանից Վերանց Պահպանողի Կատեգորիա	1-ին	2-ին	3-ին	Մեղրանից Վերանց Պահպանողի Կատեգորիա	
1	Յերեվանի գանձարկղ				1	3	3	7	2	9	15	21	19	12	57	01	21	79
2	Լենինականի գանձ.																	
3	Եջմիածնի գանձ.																	
4	Դիլիջանի գանձարկղ																	
5	Փամբակ-Լոռու գանձ.											1			1			1
6	Նոր-Բալազանի գանձ.																	
7	Ընդամենը				1	3	3	1	2	9	15	21	20	12	88	01	21	109



# Սոցիալական Ապահովագրության հանրապետական ֆոնդերի շրջանառությունը 1923 թ.

ՖՈՆԴԵՐ	1922 թ. մնացորդ		1923 թ. շրջանառութ.		1923 թ. մնացորդը	
	Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
Ա.			384551569	549633428		165081859
Բ.			166624119	68583388	98040731	
Գ.			144185494	240572103		96386609
Դ.			290831704	87908013	202923691	
Ընդամենը			986192886	946696932	300964422	261468468

1923 թ. բոլոր ֆոնդերի մնացորդը հազարներով հավասար է 39.495.264

### «Ա» ՓՈՆԴԻ ԾԱՆՍԵՐԸ (Տես յերես 9)

Այս ֆոնդը նշանակված է բացառապես նպաստատու համար. 1) ժամանակավոր անաշխատունակության դեպքում, այսինքն հիվանդացած բանվորի կամ ծառայողի փաստական. ոտճիկը նրա հիվանդության շրջանում, 2) մայրության դեպքում, այսինքն նպաստ՝ նորածին յերեխային ընթացիկ և նրան կերակրելու համար 9 ամսվա ընթացքում, և 3) լրացուցիչ նպաստ, այսինքն ծառայողի կամ բանվորի փաստական ոտճիկի հատուցումն այն ժամանակի համար, յերբ նա վրտնվում և կարանտինում և չաշխատած որերի համար՝ իր ընտանիքի հիվանդ անդամին խնամելու դեպքում (այս հանգամանքը թույլատրելի չէ, յերբ ընտանիքում հիվանդին հսկող մարդ չկա):

### ԿԱԶՄԱԿԵՐՂՉԱԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱՆՍԵՐԻ ՓՈՆԴԸ (Տես յերես 13)

Այս ֆոնդը գոյանում է բոլոր ֆոնդերից 10<sup>0</sup> զանձումից և նշանակված է բացառապես սոցիալական ապահովագրության տնտեսական, կազմակերպչական և կուլտուր-կրթական ծախսերի համար: Իսկ հարկյադ դեպքում այս ֆոնդը գործադրվում էր նամյուս ֆոնդերի ուժեղացման համար: Այս ֆոնդի 10<sup>0</sup> ուղարկվում էր Անդրկովկասյան կրկնաապահովագրության ֆոնդին:

**ՄՈՒՏՔԻ ՅԵՎ ՅԵԼՔԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մասը՝ ըստ ֆոնդերի	Ծախքերն ըստ ֆոնդերի (ըստ տեսակների)	Ծախքերի տեսակները ընդհանուր մասքի նկատմամբ	ստիանների սառսանույր
Ա	Փամանակադր անաշխատունակ	73,6	
	Յերեխայի խնամքի համար	27,3	
	Յերեխային կերակրելու համար	53,3	
	Թաղման համար	4,7	
100 <sup>0</sup> / <sub>0</sub>		158,9	- 58,9
Բ	Աշխատանքի հաշմանդամներին	31,4	
	Մեղաքների ընթացիկներին	8,7	
	Մթերքով	2,2	
100 <sup>0</sup> / <sub>0</sub>		45,3	+ 54,7
Գ	Գործազրկության նպաստ	172,	
	Գործազրկութ. նպաստ մթերքով	13,1	
100 <sup>0</sup> / <sub>0</sub>		185,1	- 85,1
Դ	Տրված և Առժողովին	33,2	
	«Բ» ֆոնդի այլ ծախքեր		
100 <sup>0</sup> / <sub>0</sub>		33,2	+ 66,8
Ե	Կազմակերպչական-տնտեսական ծախքեր	59,3	
100 <sup>0</sup> / <sub>0</sub>		59,3	+ 36,3
Մասք ընդամենը 100 <sup>0</sup> / <sub>0</sub>	Ընդհանուր ծախսեր	94,9 <sup>0</sup> / <sub>0</sub>	ինացյորդը + 5,1 <sup>0</sup> / <sub>0</sub>

Ի նկատի ունենալով այն հանդամանքը, զոր շնորհիվ տարած գործարքները կատարվել են նախ և առաջին խորհրդային դրամանիշներով, ապա Ան- թիվկասյան դրամանիշներով, իսկ կայուն վա- ռուսայի միտանցումները կատարվել են վասիով և

չերվանցով, ուստի բացարձակ ճշտությամբ ապ զոր- ծանուցյան պարզ պատկերն անհնարին և Այս պատ- ճառով ել ստիտային աղյուսակը ապիս և դրամա- կան շրջանառության ավելի ճիշտ պատկերը:



ԱՊՍՏՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹՎԻ ՀՍՍԵՄԱՏԱԿԱՆ ԱՋՈՒՍԸ ԱՇԽԱՏԱՆ

№ և ըստ կարգի	ԳՆԱՆՁԱՐԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	ՀՈՒՆՎԱՐ			ՓԵՏՐՎԱՐ			ՄԱՐՏ			ԱՊՐԻԼ			ՄԱՅԻՍ												
		Գործադուրի ընդ. թիվը	Ապահովագրված. ընդ. թվից ըստ կատեգորիաների		Գործադուրի ընդ. թիվը	Ապահովագրված. ընդ. թվից ըստ կատեգորիաների		Գործադուրի ընդ. թիվը	Ապահովագրված. ընդ. թվից ըստ կատեգորիաների		Գործադուրի ընդ. թիվը	Ապահովագրված. ընդ. թվից ըստ կատեգորիաների		Գործադուրի ընդ. թիվը	Ապահովագրված. ընդ. թվից ըստ կատեգորիաների											
			Բարձր	Միջին		Ստորին	Բարձր		Միջին	Ստորին		Բարձր	Միջին		Ստորին	Բարձր	Միջին	Ստորին	Բարձր	Միջին	Ստորին					
1.	Յերիվանի գանձարկը	690	1		1124	4		49		1.798	29		100		2.159	50		192		2.551	130		312		3	
2.	Լենին սկանի գանձ.	69			72					1.198					1.406						1.512					
3.	Եջմիածնի գանձ.															1		3					5			
4.	Դիլիջանի գանձ.																									
5.	Փամբակ-Կոտու գանձ.	204			305					292					338		1						7			
6.	Ն. Բայազետի գանձ.	56			79					111					84	2	12					1	24		4	
	Հնդամենք	1.019	1		1.580	4	49			3399	29	100			3.987	53	208				4.063	131	348	7		



# Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր

1923 թ. ԾՆՎԱԾՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՌԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Ծ Ն Վ Ա Ծ Ն Ե Ր

ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ոգոստ.	Սեպտ.	Հոկտ.	Նոյեմբ.	Դեկտ.	ԸՆԴԱՄԵՆԸ
ՅԵՐԵՎԱՆԻ	26	24	96	74	43	72	67	68	51	56	39	51	667
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ	—	—	—	25	27	74	122	66	98	66	46	33	557
ԵՋՄԻԱԾՆԻ	—	—	—	25	2	5	5	3	21	16	12	8	97
ԴԻԼԻՋԱՆԻ	—	—	—	—	2	11	7	12	9	16	16	2	97
ԼՈՌԻ-ՓՍՍԲԱԿԻ	—	—	4	1	6	13	34	4	17	3	3	10	95
ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ	—	—	—	5	6	4	—	11	10	23	15	12	83
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>26</b>	<b>24</b>	<b>100</b>	<b>130</b>	<b>86</b>	<b>179</b>	<b>235</b>	<b>164</b>	<b>206</b>	<b>180</b>	<b>131</b>	<b>138</b>	<b>1599</b>

## Մ Ե Ռ Ա Ս Ծ Ն Ե Ր

ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ոգոստ.	Սեպտ.	Հոկտ.	Նոյեմբ.	Դեկտ.	ԸՆԴԱՄԵՆԸ
ՅԵՐԵՎԱՆԻ	—	4	11	11	1	5	19	22	14	15	8	15	125
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ	—	—	1	5	1	2	7	14	22	13	4	8	77
ԵՋՄԻԱԾՆԻ	—	—	—	—	1	—	1	—	—	—	2	1	5
ԴԻԼԻՋԱՆԻ	—	—	—	—	—	1	—	1	1	1	—	4	8
ԼՈՌԻ-ՓՍՍԲԱԿԻ	—	—	—	2	—	1	4	2	—	1	2	1	13
ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ	—	—	—	—	1	—	—	—	1	2	—	1	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>—</b>	<b>4</b>	<b>12</b>	<b>18</b>	<b>4</b>	<b>9</b>	<b>31</b>	<b>39</b>	<b>38</b>	<b>32</b>	<b>16</b>	<b>30</b>	<b>233</b>

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՍԵՌԱՍ ՆԵՑՈՒԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ 1923 Ք. ՆՊՆՍՍ ԵՆ ՍՏԱՑԷԼ

ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Հանգար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Ոգոստոս	Սեպտեմբ.	Հոկտեմբ.	Նոյեմբեր	Դեկտեմբ.	ԸՆԴԱՍ ԵՆԸ
ՅԵՐԵՎԱՆԻ	1	1	6	9	9	26	—	21	23	23	62	36	217
ԼԵՆԻՆԱԿԱՆԻ	—	—	—	—	—	13	—	—	—	—	—	—	13
ԵՋՄԻԱԾՆԻ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
ԴԻԼԻՋԱՆԻ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
ԼՈՒՌԻ-ՓԱՄԲԱԿԻ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
ՆՈՐ-ՔԱՅԱԶԵՏԻ	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	1
<b>ԸՆԴԱՍԵՆԸ</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>6</b>	<b>9</b>	<b>9</b>	<b>39</b>	<b>—</b>	<b>21</b>	<b>23</b>	<b>24</b>	<b>62</b>	<b>36</b>	<b>231</b>

## Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 46

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՅԵՎ Ա. Մ. Հ. Կ. Ս. ԱՆԴՐԿՈՎՔՈՒՐՈՅԻ

Տ մայիսի 1923 թ.

(Այն փոփոխումներով, վերոնք մայրված են Ան. գրաշխագրի մասին № 63 և Անդրկովկասյան 1923 թ հուլիսի 20-ի վարչառումներով)

Կենսաթոշակների, ինչպես և գործադրված չլինող լրացուցիչ նպաստների հաշվարկման մասին:

1. Աշխատանքի հաշմանդամներին և նեցուկները կորցրած աշխատավորներին ընտանիքների կենսաթոշակների, ինչպես և լրացուցիչ (ինամեկուս, կերակրելու, թաղման համար) և գործադրված չլինող նպաստների համար վարչառումներ չլինել աշխատավորից, վերջ աշխատավորի սահմանման հիմք և բնույթով, այսինքն առաջին անհրաժեշտ ներկայացնող կենսաթոշակների բյուջեի համարումից, վերջ հաստատված և Անդրկովկասյան մասին և Ա. Մ. Հ. Կ. Ս. Անդրկովկասյան կողմից:

3. Կենսաթոշակներին և նպաստի համար, սույն վարչառման 1-ին կետի համաձայն, սահմանվում և հանրապետությունների ազատագրական մարմինների կողմից, ազատագրական միջոցների համեմատ և վաղ ավել քան 70% այն նորմայից, վերջ սահմանում են Անդրկովկասյան Հանրապետությունների Աշխատակազմում կից գտնվող և ինդիկաններ սահմանող և Անդրաշխատակազմում բյուջեի համարումի արժեքը վերջոց հանձնաժողովները, հաշված ամսի 1-ի արժեքով:

Անդր. Աշխատակազմի տեղակալ՝ Տ. ԲԱՆՈՒՏՈՎ, Ա. Մ. Հ. Կ. Ս. Անդր. ժող. նախ. տեղակալ՝ ԿՈՒՐՈՒՆՈՎ

## Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 48

Ա. Ս. Ֆ. Հ. Մ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՑ

11 մայիսի 1923 թ.

Ապրիլյան Ազատագրության տարիֆային կադրերի մասին

1922 թ. 8-ին նոյեմբերի

Ի վերջում Միության Ստորագրի «Ազատագրական տարիֆի կադրերի մասին» հրատարակված զեկրետի, Ա. Ս. Ֆ. Հ. Մ. ժողովրդական Կոմիտեի Ստորագրի վերջում և:

1. Սահմանել 1923 թ. մայիսի 1-ից վարձու աշխատանքով գրադրվողների ապրիլյան ազատագրության համար հետևյալ տարիֆը՝ աշխատավորի բոլոր տեսակներից գանձվելիք 100% այն և՛ մասնավոր, կողմերում, հասարակական, կոոպերատիվ, վարձակալական ձեռնարկներում, հիմնարկներում և անտեսություններում, ինչպես և պետական հիմնարկներում և ձեռնարկներում, վերջում այն և՛ անտեսական հաշվի: Պետական բյուջեի գտնվող հիմնարկների և ձեռնարկների (ներառյալ վերջում և ջրային հարգողացություն և կապի), ինչպես և պետության հաշվին գտնվող վտանգալից ժամանակային և մեծագույն արգելադրությունների համար 1923 թ. մայիսի 1-ից սահմանել հետևյալ ժամանակավոր արտանյալ տարիֆը:

ա) Հիմնարկների համար 120% չափով, ազատագրության տեսակների հետևյալ գաղափարում:

Ս. ժամանակավոր անաշխատունակության համար՝ 4)

	Ա.		Բ.		Գ.		Ընդամենը
	ժամանակավոր անաշուկա և անաշուկա լրացվելու առ համար	հաշմանդամության և նեյրոզների կորցում առ համար					
1 կորցրելու փոփոխության և փոփոխության առ տիճանի	6 <sup>0</sup> / <sub>0</sub>		3 <sup>1</sup> / <sub>2</sub>	2 <sup>0</sup> / <sub>0</sub>	4 <sup>1</sup> / <sub>2</sub>	16 <sup>0</sup> / <sub>0</sub>	
2 » » »	6 <sup>1</sup> / <sub>2</sub>		4 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	2	18	
3 » » »	7		5	2	2	20	
4 » » »	8		5 <sup>1</sup> / <sub>2</sub>	2	2	22	

Բ. Հաշմանդամության և ընտանիքի անդամների նպատակ՝ 1<sup>1</sup>/<sub>2</sub>

Գ. Գործադրելության համար՝ 2

Դ. Բժշկական ոգնություն համար՝ 4<sup>0</sup>/<sub>0</sub>

Ե) Արդյունաբերական ձեռնարկների և փոխադրողների համար՝ 16<sup>0</sup>/<sub>0</sub> ապահովագրության տեսակների հետևյալ դասավորությամբ.

Ա. Ժամանակավոր անաշխատունակության համար՝ 6<sup>0</sup>/<sub>0</sub>

Բ. Հաշմանդամության և ընտանիքի նպատակ՝ 3<sup>0</sup>/<sub>0</sub>

Գ. Գործադրելության համար՝ 2

Դ. Բժշկական ոգնություն՝ 4<sup>1</sup>/<sub>2</sub>

**Փանորություն.** — Պրոֆիտությունները ապահովագրական մուծումների նկատմամբ հավասարեցվում են ժողովրդականության ( ա ):

3. 2-րդ կետում հիշատակված հիմնարկների և ձեռնարկների ապահովագրական մուծումների առ 1-ին հունվարի 1923 թ. պարաքերը համարել չհղյար

Այն պարաքերը, վարոնք դոյացել են առ 1-ին մայիսի 1923 թ. հիշյալ 2-րդ կետում հիշատակված հիմնարկները և ձեռնարկները պարտավոր են մուծել վոչ ուշ, քան 1923 թ. հուլիս ամիսը, ստանց վրեկ տուգանքի և կուրսի տարբերություն

Անդրկովկասյան Ս. Հ. Մ. Ժողովրդական կոմիտեի Սորհրդի հարապահ՝ Մ. Ուսիսլավիի

Ա. Ս. Ս. Ֆ. Հ. Մ. Ժողովրդ. կոմիտ. խորհ. զոր ծերի վարիչ՝ Մ. Պալիս

Ժողովրդ. կոմիտ. Սորհրդի Գարուդար՝  
Գ. Մարտիսևի

**ՎՈՐՈՇՈՒՄ № 54**

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ-ԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 17 մայիսի 1923 թ.**

Սոցիալական ապահովագրության որևիցի խախտման գեպում պատասխանատվության յենթարկելու մասին:

Ի վերացումն Ա. Ֆ. Ս. Ս. Հ. Միության Սորհրդի 1923 թ. գեկտեմբերի 30-ին «Սոցիալական ապահովագրությունից խուսափելու և ապահովագրական մուծումները չը մուծելու համար տուգանելու մասին» հրատարակված գեկրեռի, Ժողովրդական կոմիտեի խորհուրդը վորոշեց.

1. Այն գեպում, յերբ ձեռնարկությունները, հիմնարկները և տնտեսությունները, ին մասնավոր

և ին պետական, ինչպես և սահմանված վործու աշխատանքով պալով մասնավոր անձինք, ժամանակին չեն մացնի ապահովագրական մուծումները մուծվելիք գումարները սույն վորոշման 4-5 հոդվածներում հիշատակված վերադր գումարների հետ միասին համարվում են անվճար և բնագանձվում են ստիպողաբար, անվիճելի յեղանակով, զոր, ժողովրդի աշխատիչները, վորոնք մասնանշված են Անդրկով. կենտրոնի և Անդրկ. Ժող. կոմ. Սորհի կողմից սուրբերի և գանձումների մասին հրատարակված կանոնների 8, 11, 14, հոդվածների համաձայն:

2. Պարտքերի բնագանձումը կատարվում և համարադասարան ապահովագրական մարմնի կարգադրությամբ, վորը և գանձում և ապահովագրական մուծումները:

**Փանորություն.** — Պարտապահների վորկային հիմնարկներում ունեցած ավանդների և 3-րդ անձերից ստանալիք գումարների բնագանձումը կարելի յե կատարել միայն համապատասխան դատարանի վորոշմամբ:

3. 1 և 2 հոդվածներով նախատեսված ստիպողական բնագանձման կարգի զործադրումը վորոշվում և աշխ հրահանգի համաձայն, վորը էստատովում և Անդրկով. Ֆեդերացիայի Աշխատանքի Ժողովրդական կոմիտեի կողմից, համաձայնության գալով ներքին շործերի և Արդարագրության Ժողովրդական կոմիտեի անդամների հետ:

4. Համապատասխան Հանրապետության ապահովագրական մարմինների կողմից սահմանված ժամկետին չը վճարված սոցիալական ապահովագրական մուծումների վրա պետական և փաստացի վճարման որվա պաշտոնական կուրսի տարբերությունը չը վճարվի:

Սահմանված ժամկետում չը վճարված (հոդ. 4) մուծումները կուրսային տարբերություն վրա գրվում և տուգանքի. առաջին ամսվա համար 10<sup>0</sup>/<sub>0</sub> այն գումարից, վորը պետք էր մուծել և նրա կուրսային տարբերությունից, յուրաքանչյուր հետագա ուշացրած ամիսների համար 15<sup>0</sup>/<sub>0</sub> նույն այդ գումարից, ըստ վորում վոչ լրիվ ամիսը համարվում և լրիվ ամիս:

6. Պետական և մասնավոր հիմնարկների, ձեռնարկների և տնտեսությունների պատասխանատու գեկավարները, ինչպես և վործու աշխատանքով պալով մասնավոր անձինք ապահովագրության վճարի-

Կրք գումարները 3 ամսից ուշ չմտնելու համար, ինչպես և սոցիալական ապահովագրութեան հիմնարկ ներքոմ արձանագրվելուց խուսափելու համար և այլ մարմինների պահանջելիք տեղեկութեաները չը հայտնելու, կամ նախամտածված սուտ տեղեկութեան ներ տալու համար, անձնապես յենթարկվում են քրեական պատասխանատվութեան Անդրկովկասյան Հանրապետութեան ներքին ոստիկանության համապատասխան հոգիածնների համաձայն:

7. Քրեական հետապնդումը այն պարագրիի համար, վորը նախատեսելով և 6-րդ հոդվածում, կատարվում և սոցիալական ապահովագրութեան պատշաճ մարմինների կամ նրանցից լիազորված մարդկանց ինչպես և աշխատանքի տեսուչների կողմից:

8. Պետական հիմնարկներում և ձեռնարկներում սոցիալական ապահովագրութեան կանոնների խախտման վերաբերյալ գործերի համար, աշխատանքի որևէ քննիչը խախտելու դեպքում նախատեսված քրեական որևէ սորքի կայքային բռնագանձումը կատարվում և վարչութեան հանցավոր ներկայացուցիչներից և չի կարող բարդվել համապատասխան հիմնարկութեան կամ ձեռնարկութեան վրա:

Ա. Ս. Խ. Ֆ. Հ. Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի նախագահ՝ Ուրախիսկի

Ա. Ս. Խ. Ֆ. Հ. Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի Գործերի վարիչ՝ Մ. Պոլիս

Ա. Ս. Խ. Ֆ. Հ. Ժողովրդական կոմիտեաների Խորհրդի Քարտուղար՝ Գ. Սաբուխանով:

**ՎՈՐՈՇՈՒՄ № 19**

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՇԽԱՏԱՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԲԻԱՏԻ ՅԵՎ Է. Ա. Ս. Կ. Խ. ԱՆԴՐՅՈՒՐՈՅԻ**

14 մայիսի 1923 թ.

Աշխատանակութեանը ժամանակավոր, կորցնելու ատիվ տրվելիք նպատակի գերազույն չափի մասին:

Աշխատանակութեանը ժամանակավոր, կորցնելու համար տրվելիք նպատակի գերազույն չափը սահմանել պատասխանատու աշխատավորների դրույթի 17-րդ կարգի չափով, ներառյալ արտաժամյա աշխատանքի համար տրվելիք հավելումները (нагрузка)

Աշխատավորի տեղակալ՝ Ֆ. Բախուսով  
Հ. Ա. Ս. Կ. Խ. Անդրկովկասյան նախագահ՝  
Գ. Ինգրուրց

**ՇԲՋԱԲԵՐԱԿԱՆ № 83**

11 դեկտեմբերի 1923 թ.

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՇԽԱՏԱՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎՍՐՉՈՒԹՅԱՆ**

«Ապահովագրական մուծանքների հաշվարկման ժամանակ «աշխատավոր» հասկացությունը վորոշելու մասին:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը՝ վոր «Աշխատավոր» հասկացությունը պրակտիկայում տարբեր ձևով է մեկնարանվում և ապահովագրական

մուծումների ժամանակ շատ թյուրիմացությամբ յուսանելի տեղիք տալիս, ուստի, Անդրկովկասյան Աշխատողական Բուհատարութեան Աշխատանքի Որևէ սորքի 177 հոդվածի վորոշում և:

Սոցիալական ապահովագրութեան համար տրվելիք մուծանքների չափը սահմանելիս (Աշխատանքի Որևէ սորքի 177 հոդ.) աշխատավորի մեջ մտնում են. ա) նորմալ աշխատանքի համար տրվող վարձատրութեանը՝ անկախ վճարումների ձևերից (ամսական, օրական, գործարքով և այլն), բ) վարձատրութեան արտաժամյա աշխատանքների համար, գ) վարձատրութեան՝ գերաբաղումից (перевыработка) համար, դ) վարձատրութեան՝ հատուկ հանձնարարութեաններ կատարելու համար, և) գործից հեռացվելու ատիվ տրվելիք նպատակ (Աշխ. Որևէ սորքի 88 և 89 հոդ. հոդ. կարգով):

4. Տրվելիք միջերթի արժեքը, համաձայն աշխատանքի պայմանագրով սահմանված դնահատման (Աշխատ. Որևէ սորքի 66. հոդ.), պարզեղրամները և այլ դրամական վարձատրութեանները վարձու անձանց, վորոնք տրվում են պարբերաբար կամ միանվագ:

Ինչ վերաբերում է բանվորներին և ծառայողներին արձակուրդի փոխարեն տրվելիք կուպոնացիոն դուծարներին, գործուղումների ժամանակ տրվելիք որապահիկներին, ինչպես և մի տեղից մյուս տեղ փոխադրվելու համար վճարվող դուծարներին, այդպիսի դուծարներից ապահովագրական մուծանքներ չեն գանձվում (Անդրաշխատողական Կ. Թ. մարտի 3-ի № 42 վորոշումը):

Անդրկով. Աշխատողական տեղակալ՝ Ֆազիլի Սոց. Ապահ. Գլխավ. վարչ. Պետ. Կլյուսովակ Ա. Աշխ. Ժողկոմատի ընդ-կազմ. բաժնի վարիչ՝ Ուրով-Սալախով:

**ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՉԱՓՆԸ:**

- Ա. Յերեխային խնամելու (ծննդաբերութեան) համար՝ 70<sup>0</sup>/<sub>0</sub>
- Յերեխային կերակրելու համար՝ 18<sup>0</sup>/<sub>0</sub>
- ապահովագրվածի և ընտանիքի անդամների թաղման համար, անկախ մեռնողի հասակից՝ 70<sup>0</sup>/<sub>0</sub>
- Բ. 1-ին կարգի գործազուրկների համար (վորակայները, անկախ ստաժից)՝ 50<sup>0</sup>/<sub>0</sub>
- 2-րդ կարգի գործազուրկների համար (վորակայները)՝ 35<sup>0</sup>/<sub>0</sub>
- Գ. 1-ին կարգի հաշմանդամների համար՝ 70<sup>0</sup>/<sub>0</sub>
- 2-րդ » » » » 50<sup>0</sup>/<sub>0</sub>
- 3-րդ » » » » 35<sup>0</sup>/<sub>0</sub>
- հաշմանդամների մյուս խմբակներն ապահովվում են վորպես վորակայ և վոր վորակայ գործազուրկներ.
- միակ կերակրողներին կորցրած ընտանիքների համար.
- աշխատանքի անընդունակ մի անդամով 25<sup>0</sup>/<sub>0</sub>
- » » յերկու » 35<sup>0</sup>/<sub>0</sub>
- » » և ավելի » 50<sup>0</sup>/<sub>0</sub>

Անդրաշխոհողորի անդակալ՝ Յազարի  
Հ. Ա. Մ. Կ. Խ. Անդրաշխոհողորի անդակալ  
Վ. Կուրուրով  
Խո. Անդրաշխոհողորի սոց. ապ. Գլխ. վարչ.  
պետի՝ Բլյուսովալ

**ՎՈՐՈՇՈՒՄ № 71**

**ԱՆԴՐԱՇԽՈՒԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ**

17 հոկտեմբերի 1923 թ.

Մայրերին ծննդաբերությունից մեկ ամիս ա-  
ռաջ յերեխային խնամելու համար արվելիք նպաստի  
մասին:

Ի զարգացումն Աշխատանքի Որենսգրքի 8-րդ հոդ-  
վածի և ի լրումն Անդրկով. Միության Սոցհրդի 1923 թ.  
ոգոստոսի 23 ի ղեկրեալի (բանվորներին և ծառայողնե-  
րին, աշխատունակությունը ժամանակավ. կորցնելու  
գեղբում սոցիալապես ապահովելու և ապա-  
հովություն լրացուցիչ տեսակների մասին), Անդրաշխ-  
ոհկոմատը, ի նկատի ունենալով այն հանգամանքը,  
վոր յերեխային խնամելու համար արվելիք նպաստը  
ապահովագրվածին հնարավորություն և ապրիս նա-  
խարքը պատրաստելու յերեխայի խնամքի համար ան-  
հրաժեշտ առարկաները, վորոշեց.

1. Յերեխային խնամելու համար արվելիք նը-  
պաստը բաշխել նրա ծննդից մի ամիս առաջ:
2. Հիշյալ նպաստն ստանալու համար անհրա-  
ժեշտ և ներկայացնել բժշկական-վերահսկիչ հանձնա-  
ժողովի վկայականը ծննդաբերության ժամանակի մա-  
սին:
3. Սույն վորոշումը մանուկ և ուժի մեջ նրա  
հաստատման որից:

Անդրաշխոհողորի Ս. Յակուրով  
Անդրաշխոհողորի ընդ-կազմ. բաժնի վարիչ՝  
Արլով-Մալախով.

**II ԳԼ. § 3-Ի ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ամեն մի ծանր հիվանդության գեղբում, վորն  
արվելում և հիվանդին անձամբ գնալ ամբուլատորիա, հի-  
վանդի մաս հրավիրվում և ապահովագ. բժիշկը, այս  
մասին հայտնելով ամբուլատորյա աշխատանքի ժա-  
մերին.
2. Բժիշկը պարտավոր և այցելել հիվանդին  
հրավերից վոր ուշ, քան 3 ժամ հետո:

3. Բոլոր զժբախտ գեղբերի համար, վորոնք  
պահ նշում են բժշկական շուտափույթ ոգնություն,  
այն և՛ ծանր հարվածներ և վիրավորանք, արշունանո-  
սություն, կոտրվածք և այլն, սահմանվում և հիշյալ  
հիմնարկներում հասուկ հերթապահություն:

4. Այսպիսի գեղբերում ոգնություն և հասցրվում  
հրավիրելուց անմիջապես հետո:

5. Ապահովագրվածներից նրանք, վորոնք բժիշկ  
են հրավիրում առանց պատշաճ հիմունքների, յեն-  
թարկվում են պատասխանատվության արհեստակցա-  
կան յեղանակով:

Կոլեկիայի անդամ՝ Հովսեփյան

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ**

Հղի կանանց աշխատավորքը ստանալու կարգի,  
յերեխայի սծիալի և սննդի համար արվելիք նպաստի  
մասին:

1. Հղի աշխատավորուհիներն արձակուրդ ստա-  
նալու համար անդակալն ապահովագրական գանձարկղի  
միջոցով պետք և զիմեն բժշկական-վերատուգիչ  
հանձնաժողովներին, վորտեղից և պետք և ստանան  
համապատասխան վկայական-աշխատանքից ազատվե-  
լու համար:

2. Ապահովագրված հղի կանայք յերեխայի սծի-  
ալի համար արվելիք միանվագ նպաստը կարող են  
ստանալ հետևյալ կարգով.

Ծննդաբերությունից մի ամիս առաջ անհրա-  
ժեշտ և ստանալ համապատասխան վկայական անդա-  
կան ապահովագրական գանձարկղների միջոցով բժշ-  
կական վերատուգիչ հանձնաժողովներից:

Վկայական ստանալուց հետո, հղի կանայք պար-  
տավոր են ներկայանալ կոնսուլտացիայի անհրա-  
ժեշտ խորհուրդներ ստանալու համար և ապահո-  
վագրական գրքույկի վրա մակագրելուց ու բժշկական  
հանձնաժողովից ստացած վկայականը ներկայաց-  
նելուց հետո միայն կարող են ստանալ միանվագ  
նպաստը:

3. Բժշկական կոնսուլտացիան խորհուրդներ կը  
առ մայրերին նաև ծննդաբերությունից հետո  
ինչու և յերեխային կերակրելու համար արվելիք  
նպաստը 9 ամսվա ընթացքում կը արվի կոնսուլ-  
տացիայի համապատասխան մակագրությունից հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սյս հրահանգները ստրածվում  
են այն զավասների վրա, վորտեղ Սոցիալիզմը կը կազմա-  
կերպի կոնսուլտացիայի:

**ՀՐԱՀԱՆԳՆԵՐ**

**I. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ՀԻՎԱՆԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ  
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ  
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

1. Ամբուլատորիայում բժշկական ոգնություն  
ստանալու համար, բանվորը կամ ծառայողը հիմնար-  
կության վարչություն գիտությունը, որվա վորոշ ժա-

մերին թողնում և իր աշխատանքը ամբուլատորիա  
գնալու համար:

2. Այն գեղբերում, յերբ բանվորը կամ ծառա-  
յողը բժշկական ոգնություն և ստանում տանը կամ  
հիվանդանոցում, հիվանդության տառջին օրն իսկ  
անդկոմից կամ գործարկումից ստանում և ատեղեկա-  
վիր», վորը և հանձնում և իրեն բժշկույ բժշկին: Իը-

Ժիշկը պատասխանում և տեղեկագրի հարցերին և մի ամիս լրանալուց կամ հիվանդի առողջանալուց հետո (յեթև հիվանդութունը մի ամսից պակաս և տեղում) ուղարկում է տեղեկագրերը հիմնարկութան վարչության, վորն իր հերթին տեղեկագրի համապատասխան հարցերին պատասխանելով ուղարկում է ապահովագրական գանձարկղին: Գանձարկղը վճարում է հիվանդի աշխատավարձը հիվանդութան առաջին որից հաշվելով, այն անձին, վորին մատնացույց կանի հիվանդը: Յեթև հիվանդն իր առողջական զրուխյամբ ի վիճակի չի մատնացույց անել այս կամ այն անձին, աշխատավարձը արվում է նրա ընտանիքի այն անդամին, վորը ներկայացնում է նրա ապահովագրական գրքույկը:

3. Խեղման, վերքեր և այլ վնասվածքներ ստանալու դեպքում յերբ բժշկական ոգնությունը հասցվում է ամբուլատորիական կարգով, բայց հիվանդը իր առողջական զրուխյամբ չի կարողանում աշխատել, ապա բժիշկը հիվանդից բտեղեկագիր» և պահանջում և պատասխանում համապատասխան հարցերին: Մնացածի վերաբերմամբ պահպանվում է յերկրորդ կետում հիշատակված կարգը:

4. Ապահովագրական գանձարկղի անդամ հղի կանայք և ծննդկանները ազատվում են աշխատանքից բժշկական քննիչ հանձնաժողովի թույլտվությամբ:

Ֆիզիքական աշխատանքով զբաղվող անձինք ազատվում են ութը շաբաթ ծննդաբերությունից առաջ և ութը շաբաթ հետո: Մտավոր աշխատանքով զբաղվող անձինք՝ վեց շաբաթ ծննդաբերությունից առաջ և վեց շաբաթ հետո:

Ծանոթ. Այն հղի կանայք, վորոնք սանձանված մամանկից ուշ են արձակուրդ ստանում, ծննդաբերությունից հետո լրացուցիչ արձակուրդ չեն կարող ստանալ:

5. Տեղեկագրից ոգտվել կարող են միայն ապահովագրվածները, բայց վոչ մի դեպքում ընտանիքի անդամները:

**II. ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ**

1. Յերբ ապահովագրվածը կամ նրա ընտանիքի վորեկի անդամը հիվանդանում է, պետք է գիմի բուժարան (ամբուլատորիա), ուր նա ստանում է հերթից դուրս հատուկ բժշկական ոգնություն:

Ծանոթ. Ապահովագրվածների ընտանիքի անդամները բժշկական ոգնություն ստանում են ընդհանուր հիմունքներով:

2. Ամբուլատորիա այցելող հիվանդները դեղորայք են ստանում նույն տեղում կամ դեղատաներից:

3. Այն դեպքում, յերբ հիվանդ ապահովագրվածը կամ նրա ընտանիքի անդամը ի վիճակի չեն բուժարան գնալ, բժշկին տուն են կանչում:

4. Բժշկին տուն կանչելիս անհրաժեշտ է ապահովագրական գրքույկն ուղարկել կենտրոնական բուժարան, ուր և որդեր են գրվում բժշկի անունով:

5. Բուժարանից արված որդերով բժիշկը այցելության է գնում հիվանդին մինչև յերեք անգամ:

6. Հիվանդին այցելող բժիշկը հատուկ գեղատոմսերով գեղ է գրում հիվանդի համար, իսկ դեղորայքը արվում է դեղատնից:

7. Այն դեպքում, յերբ բժիշկը յերեք անգամ այցելելուց հետո հիվանդի զրուխյունը չի բարելավվում, ապա հիվանդը նույն բժշկի կողմից ուղարկվում է համապատասխան հիվանդանոց, ուր հիվանդը տեղավորվում է վոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում հաշվելով բժշկի պահանջման որից: Հակառակ դեպքում բժշկությունը պետք է շարունակվի տանը մինչև նրան հիվանդանոց տեղավորելը:

8. Պատենտավոր միջոցներ, հիվանդներին խնամելու և առողջագրական այլ առարկաներ ապահովագրվածներին արվում են Ա. Ժ. Կ. ինքնարժեքով:

9. Արհեստական ստամներ ապահովագրվածներին համար պատրաստվում և զրվում է ինքնարժեքով: Այդ դեպքում վճարումը կարող է լինել մաս-մաս, յեթև հիմնարկությունը յերաշխավորի ապահովագրվածի համար:

10. Յուրաքանչյուր ապահովագրական գանձարկղին կից գործում է բժշկական-եքսպերտային հանձնաժողով, վորի պարտականությունն է քննել հիվանդ ապահովագրվածներին աշխատանքից ազատելու, հատուկ բժշկության ուրիշ քաղաքներ և հանրապետություններ ուղարկելու և հանգստյան տներում ու սանատորիաներում տեղավորելու համար: Նույն հանձնաժողովը քննում է հաշմանդամներին, վերջիններին անաշխատունակության աստիճանը վորոշելու համար:

**III. ՀՍՏՈՒԿ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

1. Յեթև հիվանդ բանվորը, կամ ծառայողը կամ նրանց ընտանիքի անդամները կարիք ունեն հատուկ, մասնագիտական բժշկության ուրիշ քաղաքներում կամ հանրապետություններում, ապահովագրական գանձարկղն այդպիսիներին ուղարկում է բժշկվելու, բժշկական եքսպերտային հանձնաժողովի վկայութամբ:

2. Հատուկ բժշկության ուղարկվողը ապահովագրական գանձարկղից ստանում է փաստացի ճանապարհածախս և մի ամսվա ոռճիկ:

Ծանոթ. Յեթև հիվանդությունը տեղ ավելի, քան մեկ ամիս, հիվանդը կարող է ստանալ հետագա ոռճիկը այն ապահովագրական գանձարկղից, վորի շրջանում գտնվում է նա: Այդ մասին տեղեկացվում է այն ապահովագրող, վորի անդամն է հիվանդ ապահովագրվածը:

3. Ապահովագրվածները և նրանց ընտանիքի անդամները հատուկ բժշկական ոգնություն ձրիաբար են ստանում բոլոր Ա. Ս. Հանրապետություններում:

**IV. ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

1. Ապահովագրված բանվորները և ծառայողները հանգստյան տներում տեղ կարող են ստանալ հերթական արձակուրդի ժամանակ, համապատասխան արհմիությունների միջոցով:

2. Հանգստյան տներ ուղարկվողները քննության են յենթարկվում բժշկական-եքսպերտային հանձնաժողովի կողմից:

3. Հանգստյան տուն ուղարկվողները ստանում են ապահովագրողից միայն ճանապարհածախս, իսկ ոռճիկը արվում է ծառայության տեղից:

**V. ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

1. Մանատորիական բժշկության կարիք ունեցող

ապահովագրվածները քննութեան են յինթարկվում նախ բժշկական-եքսպերտային հանձնաժողովներում և ապա ուղարկվում Առօրեկոմսաթի կուրորտային հանձնաժողովը:

2. Կուրորտային հանձնաժողովից համապատասխան վկայական ներկայացնող ապահովագրվածներին Սոցխրախկան Ապահովագրութեան վարչութիւնը տեղ և հատկացնում սանատորիայում:

3. Սանատորիա ուղարկվողները տեղակայան ապահովագրվածները ստանում են փաստացի ճանապարհածախս և մի ամսվա ուժիկ: Յեթե հիվանդութիւնը տեղում և մի ամսից ավելի, հետագա ամիսների ուժիկը ապահովագրվածն ստանում և այն ապահով. գանձարկից, վորի շրջանում նա բժշկվում է:

Սոցխրախկան Ապահովագրութեան վարչութեան  
Պետ' Մ. Յուզրաւայան  
Առօրեկոմի տեղակալ, Բուժքահի վարիչ,  
Ջալլաղյան

### VІ. ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

1. Մայրութեան միանվագ նպաստ յերեխայի բաժին գնելու համար ապահովագրվածին տրվում է ծննդաբերութեանից մեկ ամիս առաջ: Այդ առթիվ ապահովագրվածին վկայական և տալիս բժշկական-եքսպերտային հանձնաժողովը:

2. Ծննդաբերութեանից հետո յերեխային կերակրելու համար ապահովագրվածին տրվում է ամսական նպաստ՝ 9 ամիս շարունակ, հաշվելով ծննդաբերութեան օրից: Նպաստը տալու օրը նշանակում է ապահովագրից:

3. Ծննդաբերութեանից հետո յերեխային կերակրելու նպաստ ստանալու համար համապատասխան վկայական և ներկայացվում «Զագս»-ից՝ ապահովագրական գրքույկի հետ միասին:

### VІІ. ԹԱՆՍԱՆ ՆՊԱՍՏ

Թաղման նպաստ տրվում է թե ապահովագրվածի և թե նրա ընտանիքի անդամի մահվան դեպքում: Նպաստը ստանալու համար Ապ. Գանձարկիին պետք է ներկայացնել ապահովագրական գրքույկը և «Զագս»-ից տրված վկայականը:

### VІІІ. ԳՈՐԾԱՂԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ

1. Գործազրկութեան նպաստ ստանալ կարող է ամեն մի գործազուրկ, վորը ցուցակագրված է Աշխատանքի Բորտայում և վորը փաստաթղթեր և ներկայացնում Ապ. Գանձարկիին իր վարձու ծառայութեան սառի մասին:

2. Գործազրկութեան նպաստ ստանալու համար Գանձարկիին պետք է ներկայացնել հայտարարութիւն, վորին պետք է կցված լինեն Աշխորտայի գրքույկը և ծառայութեան սառը հաստատող փաստաթղթերը:

3. Գործազրկների զիմուճները քննութեան են անձնավում հատուկ հանձնաժողովի կողմից, վորին մասնակցում են Ապահ. Գանձարկիի, Արձմիութեան և Ա.Խորտայի ներկայացուցիչները:

4. Հանձնաժողովի վորոշումները կարող է փոխել

կամ բեկանել Սոցխրախկան Ապահովագրութեան վարչութիւնը:

5. Ապահովագրված գործազուրկը վայելում ապահովագրված բանվորի կամ ծառայողի բոլոր իրաւ վունքները:

## IX. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

### Ա. ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ

1. Մշտական անաշխատունակութիւնը հաստատվում է բժշկական-եքսպերտային քննիչ հանձնաժողովի կողմից: Ապ. Գանձարկիին տրված զիմուճներն ուղարկվում են այդ հանձնաժողովին:

2. Ապ. Գանձարկի զիմուճ ներկայացնելիս պետք է կցվեն նաև ծառայութեան սառը հաստատող փաստաթղթերը:

3. Բժշկական հանձնաժողովի քննութիւնից հետո հաշմանդամութեան կատեգորիան հաստատում է Ապահովագրական Գանձարկիը:

4. Ապահովագրված հաշմանդամը վայելում է ապահովագրված բանվորի կամ ծառայողի բոլոր իրաւ վունքները:

### Բ. ՄԵԹԱՍՆԵՑՈՒԿՆԵՐԻ (ՄԻԱԿ ԿԵՐԱԿՐՈՂՆԵՐԻ) ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

1. Ապահովագրված նեցուկի մահից հետո, նրա ընտանիքի բոլոր անաշխատունակ և անշահախառն անգամներն իրավունք ունեն կենսաթոշակ ստանալու:

2. Այդ նպատակով «Զագս»-ից վկայական և ներկայացվում ապահովագրված նեցուկի մահվան մասին, ըստ վորում ներկայացվում են նաև մեռածի ապահովագրական գրքույկը և անցյալ ծառայութեանը հաստատող փաստաթղթերը:

3. Կենսաթոշակ և տրվում նաև անհայտ կորած նեցուկների ընտանիքներին, յեթե վերջիններս համապատասխան փաստաթղթեր են ներկայացնում Ապահովագրական Գանձարկիին:

### ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՀԻՇԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԸ

1. Վոր Ապահովագրական Գանձարկիը բանվորական կազմակերպութիւն է:

2. Վոր գանձարկի միջոցները պոյանում են ձեռնարկատերերի տոկոսային մասնատումներից, ուստի և յուրաքանչյուր ապահովագրված պետք է հետեւի, վոր ձեռնարկատերը կամ հիմնարկութեան վարչութիւնը ժամանակին վճարեն գանձարկիին հասանելիք ապահովագրական գումարները:

3. Վոր գանձարկի յուրաքանչյուր անդամ պետք է հետեւի, վոր ապահովագրվածներից վոչ վոք ի չարն գործ չը դնի գանձարկիի ոգնութիւնը: Յուրաքանչյուր մի ուրբիին, վոր անտեղի և սխալ կը վճարվի, վերջին հաշվով կը խորտակի ամբողջ գործը:

4. Գանձարկիի ոգնութիւնն ի չարը գործնողը արժանի չէ բանվորական ընտանիքի անդամ լինելու: Պայքարեցեք զանցառուների և հիվանդ ձեւ վացողների դեմ:

5. Անհրաժեշտ է կատարել բժշկի բոլոր խոր-

հուրդները, հակառակ դեպքում ապահովագրվածը ոչ-նութկուն ստանալու իրավունքից կը զրկվի:

6. Ապահովագրվածը պարտավոր է կատարել բժիշկների բոլոր խորհուրդներն ու կարգադրությունները և միաժամանակ աջակցել, վոր վարակիչ հիվանդությունների դեմ ձեռք առնվող միջոցները գործադրվին: Ապահովագրվածը պարտավոր է նաև ճշտությամբ կատարել բոլոր անոգջապահական և սանիտարական կանոնները: \*)

7. Ապահովագրվածը պարտավոր է կատարել սոցիալական ապահովագրության բոլոր վորոշումները, վորովհետև սոցիալական ապահովագրությունը գրանվում է իրենց, բանվորների ձեռքին:

\*) Ծանոթ. ի գորգացումն ներկա հրահանգների ապահովագրվածներին տանը բժշկական սգնություն հասցնելու կարգի մասին Սոցիալական Ապահովագրության վարչության համաձայնությունամբ Առժողկամտաի կողմից կը հրատարակվեն մանրամասն հրահանգներ:

Սոցիալական Ապահովագրության վարչության կողմից հրատարակված են լրացուցիչ հրահանգներ հղի կանանց նպաստ և աշխատավարձ, ինչպես նաև մայրության նպաստ աայու կարգի մասին:

8. Բոլոր նպաստներն ու կենսամթոշակները պանձորկղից տրվում են մի ամսյա ընթացքում: Մի ամսյա ընթացքում վոչ հարգելի պատճառով չը առացուցաները զրկվում են նպաստից ընդմիջում:

9. Ապահովագրական գրքույկը պետք է խնամքով պահել, վորովհետև այդ գրքույկը մի անգամ է միայն տրվում ամբողջ ծառայություն ընթացքում:

10. Ներկա հրահանգներում հիշատակված փաստաթղթերից բացի, պանձարկղի պահանջման դեպքում, պետք է ներկայացնել նաև լրացուցիչ փաստաթղթեր, ըստ գանձարկղի հայեցողության:

11. Պաշտոնից արձակվելիս կամ կանոնին հետանալիս ապահովագրվածը պարտավոր է իր ապահովագրական գրքույկը թողնել հիմնարկությանը:

12. Հեռացածների կամ արձակվածներին ապահովագրական գրքույկները հիմնարկության վարչությունը կողմից ուղարկվում են ապահովագրական գանձարկղին: Հակառակ դեպքում արձակվածը կամ հեռացածը կը համարվի վորպես ծառայությունը շարունակաբար:





ՀՀ Ազգային գրադարան



NL0221864

44.095

